Աշխեն Քեշիշյան

Երբ փոքր էի...

***

Երբ փոքր էի մորս հետ

քայլում էինք պապիս տուն:

Այդ ժամանակ մեր թաղամասի

փողոցները ինձ հսկա

օձեր էին թվում,

որոնք կարող էին ձգվել

մինչև աշխարհի վերջը,

իսկ աշխարհի վերջը

ինձ մեծ ու վախենալու փոս էր թվում:

Այդ պատճառով ես թողնում էի

մորս ձեռքը

և ոչ թե կողքից էի քայլում,

այլ բաղի ճուտիկի պես

ետևից ընկած,

որ ամբողջ ճանապարհին

հետևեմ միայն մորս ոտքերին:

Ես հիշում եմ, նրա շագանակագույն

կոշիկները, ոնց էր կոխորտում

ասֆալտին փռված արևը,

և քայլում էի՝ անվախ,

աշխարհի վերջի փոսը լցվում էր

մորս սիրով:

Ու չկար աշխարհի վերջ:

***

Հորս կառուցած այս տունը

սիրում է մորս,

երբ մայրս նորից մեր տանն է

տան պատերը

ուղղվում են,

մի տեսակ հպարտ են կանգնում,

առաստաղից կախված

ջահի փոխարեն

արևը ուժեղ լուսավառվում է,

ու տան բոլոր առարկաները

դեղնածորում են լուսաթաթախ:

Երբ մայրս նորից մեր տանն է

Նա իր փոքրիկ մարմնով

Գրկում է մեզ

այս տան հետ միասն

ու երկինք է բարձրացնում: